

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/6

24 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Սեյֆթի» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300120/03 որոշման դեմ:

«Սեյֆթի» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Սեյֆթի» ՍՊԸ տնօրենը հայտնում է, որ 29.09.2015 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300120/03 որոշումը, որի համաձայն իր կողմից չի ներկայացվել 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը:

«Սեյֆթի» ՍՊԸ-ն իր գործունեությունը սկսել է 2015 թ-ի հուլիսի 6-ին, հետևապես 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չունի:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300120/03 որոշումը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 22.09.2015 թ-ի 638 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Սեյֆթի» ՍՊԸ տնօրենը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 29.09.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300120/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Սեյֆթի» ՍՊԸ տնօրենի նկատմամբ վարչական տույժ նշանակելու, այն է՝ 20.000 դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Սեյֆթի» ՍՊԸ-ն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2015 թ-ի հուլիսի 6-ից: Այսինքն, գործունեությունը 2015 թ-ի հուլիսի 6-ից սկսվելու պայմաններում «Սեյֆթի» ՍՊԸ-ն չի կրել 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի

որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 29.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 300120/03 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ